ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ՀԱՆՈՒՆ
ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԿՈԱԼԻՑԻԱ

Աշխատանքի հայտարարություն

Աշխատանքի անվանում – ԽԴՊՀՀԿ ներքին և արտաքին հաղորդակցման ռազմավարությունների մշակման մասնագետ

Աշխատանքի տևողություն – 2 ամիս

Աշխատաժամանակը – ազատ գրաֆիկ

Աշխատավայր – ք. Երևան

Աշխատանքի սկիզբ – հնարավորինս շուտ

Աշխատանքի նկարագրություն

Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության կոալիցիային հայտարարում է ԽԴՊՀՀԿ ներքին և արտաքին հաղորդակցման ռազմավարության մշակման մասնագետի թափուր աշխատատեղի մրցույթ: Մասնագետն իր աշխատանքներում հաշվետու է լինելու ԽԴՊՀՀԿ Հաղորդակցման խմբի համակարգողին և ԽԴՊՀՀԿ ծրագրային համակարգողին: Իր աշխատանքների շրջանակներում ընտրված մասնագետը սերտորեն համագործակցելու է ԽԴՊՀՀԿ Հաղորդակցման խմբի հետ:

Աշխատանքային պարտականություններ

- Մշակել ԽԴՊՀՀԿ ներքին հաղորդակցման ռազմավարությունը՝ ներառյալ կոնֆլիկտների կարգավորման, տեղեկատվության շրջանառման և ուղղորդման, էթիկայի կանոնները, ընթացակարգային կանոնները, խմբագրական ուղեցույցը:
- Մշակել ԽԴՊՀՀԿ արտաքին հաղորդակցման ռազմավարությունը՝ ներառյալ ՓՌ, ՋԼՄ, բրենդինգ, ուղերձների ձևակերպում:
- Սերտորեն համագործակցել ԽԴՊՀՀԿ Հաղորդակցման թիմի հետ՝ ապահովելով վերջնարդյունքի համապատասխանելիությունը Կոալիցիայի կարիքներին և ռազմավարական նպատակներին:
- Աշխատանքի առաջին ամսվա ավարտին ներկայացնել ռազմավարությունների նախնական տարբերակը:
- Աշխատանքներն իրականացնել՝ հարգելով վերջնաժամկետները:

Անհրաժեշտ հատկանիշներ

- Բարձրագույն կրթություն սոցիալական գիտությունների, կառավարման, հանրային կապերի ոլորտում:
- Կազմակերպությունների /առևտրային և ոչ առևտրային/ ներքին և արտաքին ռազմավարությունների մշակման ապացուցելի փորձ :
- Հայերեն լեզվին գերազանց, իսկ անգլերեն լեզվին մասնագիտական մակարդակի տիրապետում:
- Անկախ և վերջնարդյունքի համար պատասխանատու կերպով աշխատելավոճ:
- Լավ համագործակցային, հաղորդակցման և թիմային աշխատանքի հմտություններ:
- Բարեխղճություն և պատասխանատվության բարձ զգացողություն:
- Հարգանք ԽԴՊՀՀԿ գաղափարախոսության նկատմամբ և մասնավորապես՝ մարդու իրավունքների, արժանապատվության և հավասարության գաղափարների հանդեպ :

Ընթացակարգ

Հետաքրքրված անձինք կարող են իրենց ինքնակենսագրականը (CV) և ռազմավարությունների մշակման հակիրճ հայեցակարգերը ուղարկել հետևյալ էլ. հասցեին՝ info@havasar.am մինչ **2017 թ. մարտի 23-ը**:

Ինքնակենսագրականների և հայեցակարգերի ուսումնասիրության արդյունքում ընտրված անձինք կհրավիրվեն հարցազրույցի:

Կազմակերպության մասին

Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության կոալիցիան միավորել է այն կազմակերպություններին և անհատներին, որոնց նպատակն է նպաստել Հայաստանում մարդու իրավունքների իրացմանն ու պաշտպանությանը, հավասարության և անձի արժանապատվության հանդեպ հարգալից վերաբերմունքի տարածմանը:
Կայքէջ՝ www.havasar.am
Ֆեյսբուքյան էջ՝ ԽԴՊՀՀԿ

Կոալիցիայի անդամներ՝
«Ազաթ» ՀԿ, «Իրական աշխարհ, իրական մարդիկ» ՀԿ, «Իրավունքի զարգացման կենտրոն» ՀԿ, «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ, «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» ՀԿ, «Հայաստանի Հելսինկյան կոմիտե» ՀԿ, «Հանուն հավասար իրավունքների» ՀԿ, «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ, «Հասարակություն առանց բռնության» ՀԿ, «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ, «Նոր սերունդ» մարդասիրական ՀԿ, «Ունիսոն» ՀԿ, Վահան Բուրնազյան, Անահիտ Չիլինգարյան: